Կազմված է 13.09.2019թ.

Բաղկացած է 11 թերթից

Տպագրված է 3 օրինակից

Օրինակ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի

նախարարի

2019 թվականի սեպտեմբերի 13-ի

N 653 - Ա/2 հրամանով

_____Ա.Հարությունյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության

արդարադատության նախարարության

իրավաբանական անձանց պետական ռեգիստրի

կողմից 07.05.2003թ.

Գրանցման թիվ 282.210.04696

ՀՎՀՀ 00805094

02.11.2017թ. գրանցված կանոնադրության

թիվ 001.2 փոփոխությունը գրանցվել է

Հայաստանի Հանրապետության Արդարադատության

նախարարության աշխատակազմի իրավաբանական

անձանց պետական ռեգիստրի գործակալության

կողմից

«03» 10 2019թ.

_____

«ԵՐԵՎԱՆԻ N2 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Նոր խմբագրություն)

2019թ.

Հավելված
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2019թ. սեպտեմբերի 13-ի N 653-Ա/2 հրաման

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Երևանի N2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող (կազմակերպող, համակարգող) և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում իրականացնող ոչ առևտրային կազմակերպություն է:

Կազմակերպության կողմից տրամադրվում է երեխայի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տարածքային մակարդակը:

2. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

3. Կազմակերպությունը հանդիսանում է «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ.6 հատուկ (օժանդակ) հիմնական դպրոց» բյուջետային հիմնարկի (գրանցման (հաշվառման) համարը 282.0139, վկայականի համարը ՆԲ 003213, հաշվառման ամսաթիվը 03.03.97թ.) իրավահաջորդը:

4. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

5. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Աճառյան փողոց 1-ին փակուղի, 40 շենք:

6. Կազմակերպության հայերեն անվանումն է «Երևանի N2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, ռուսերեն անվանումն է՝ "Ереванский региональный центр педагогической и социальной поддержки №2" государственная некоммерческая

организация, անգլերեն անվանումն է "Yerevan regional pedagogical-social support center N2" state non commercial organization.

7. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունն իր անունից կարող է ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

8. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և կազմակերպության հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

9. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

10. Կազմակերպությունն իր գործունեության շրջանակներում կարող է համագործակցել օտարերկրյա և միջազգային կրթական կազմակերպությունների հետ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

11. Լիազոր մարմնի կողմից ամրագրվում է համապատասխան տարածքներում գործող հանրակրթական հիմնական /այդ թվում՝ նախադպրոցական/ և մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների ցանկը՝ որպես Կազմակերպության սպասարկման տարածքի կազմակերպություններ:

12. Կազմակերպությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) ուսումնական և մեթոդական գրականության մշակում և հրատարակում.

2) դիդակտիկ նյութերի և պարագաների ստեղծում.

3) մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում 18-ից բարձր տարիքի /հանրակրթության մեջ չընդգրկված/ անձանց.

4) փորձագետ-մասնագետների կողմից մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցում:

13. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է նրա կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

14. Կազմակերպության հաշվետու տարվա շահույթը բաշխվում է հետևյալ ուղղություններով՝

1) պահուստային ֆոնդ (ռիսկեր և անորոշություններ՝ ներկա արժեքի և ապագայի դեպքեր, անբարենպաստ պայմանագրեր).

2) կուտակման ֆոնդ (ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման և ոչ ընթացիկ ակտիվների վերանորոգման նպատակով).

3) սպառման ֆոնդ, որը ներառում է՝

ա. աշխատողների նյութական խրախուսման ֆոնդը /մասնագիտական և բարեխիղճ աշխատանքի համար/.

բ. դրամական օգնության ֆոնդը /աշխատողների երկարատև հիվանդության, մահվան, աշխատողների հարազատների մահվան, ինչպես նաև ամուսնության և այլ առիթներով/.

գ. բարեգործական ֆոնդը.

դ. այլ (կարող է ներառել կանոնադրական խնդիրների իրականացման համար նախատեսված այլ նպատակներ):

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ, ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15. Կազմակերպության գործունեության առարկան՝ կրթության կազմակերպման ոլորտում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցումն է:

16. Կազմակերպության նպատակը իր սպասարկման տարածքի ուսումնական հաստատություններում սովորողների կրթության կազմակերպմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառմանն աջակցելն է:

17. Կազմակերպության գործունեության հիմնական խնդիրը սպասարկման տարածքի ուսումնական հաստատություններում ընդգրկված երեխաների կրթության աջակցության ծառայությունների իրականացումը, ծառայությունների մատչելիությունը և արդյունավետությունը համակարգելն ու վերահսկելն է, երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատելը:

18. Կազմակերպությունն իրականացնում է մանկավարժահոգեբանական աջակցության երկրորդ՝ տարածքային մակարդակի՝ հետևյալ ծառայությունները.

1) խորհրդատվություն երեխայի ծնողին և դպրոցի մանկավարժական աշխատողներին՝ երեխայի կրթության կազմակերպման և սոցիալական ներգրավման վերաբերյալ.

2) խորհրդատվական այցեր տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների սպասարկման տարածքների կազմակերպություններ՝ ըստ փոխհամաձայնեցված ժամանակացույցների.

3) մանկավարժահոգեբանական նեղ մասնագիտացված ծառայությունների մատուցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այն անձանց, ովքեր ունեն հետևյալ ֆունկցիաների խանգարումներ՝

ա. ձայնի և խոսքի,

բ. լսողական,

գ. տեսողական,

դ. մտավոր (ինտելեկտուալ) հետամնացություն,

ե. շարժողական.

4) ուսումնական հաստատություններում կրթության կազմակերպմանն աջակցող մասնագետների՝ ուսուցիչների, նրանց օգնականների վերապատրաստումներ, ծնողների համար ուսուցողական դասընթացների կազմակերպում.

5) տնային պայմաններում ուսուցման կազմակերպմանն աջակցելու նպատակով մասնագետների տնայցերի իրականացում՝ ըստ ուսումնական հաստատությունների հայտերի:

19. Կազմակերպությունը լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնում է համապատասխան լինցեզիայի առկայության դեպքում:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

20. Կազմակերպությունն իր սպասարկման տարածքում՝

1) ապահովում է մանկավարժահոգեբանական աջակցության և կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատման միասնական համակարգի գործարկումը,

2) իրականացնում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում և կազմում համապատասխան եզրակացություն՝ երեխայի կրթության կազմակերպման համար անհրաժեշտության առանձնահատուկ պայմանների վերաբերյալ,

3) երեխաներին և նրանց ծնողներին կամ օրինական ներկայացուցիչներին, մանկավարժական աշխատողներին մատուցում է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ (աջակցության երկրորդ մակարդակ),

4) պատասխանատու է կրթության աջակցության ոլորտը կարգավորող իրավական ակտերի ներդրման և արդյունավետ գործարկման համար,

5) ամփոփում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների տվյալները և առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ տրամադրում է Հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնին:

6) իրականացնում է օրենսդրությամբ և իր կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ ու գործառույթներ:

21. Կազմակերպությունը երեխայի կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի գնահատումն իրականացնում է ծնողի (օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա կամ երեխայի կրթության վայր հանդիսացող ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի դիմումի հիման վրա, եթե դիմումին կցված է ծնողի ստորագրած համաձայնագիրը:

22. Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի մանկավարժահոգեբանական գնահատումը կազմակերպվում է ծնողի (կամ նրա օրինական ներկայացուցչի) մասնակցությամբ: Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատվում է երեխայի կենսագործունեության բնական միջավայրում (ընտանիք, ուսումնական հաստատություն և երեխայի շփման այլ միջավայրում)՝ մեկամսյա ժամկետում:

23. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ վկայագիր ունեցող երեխայի կրթության կազմակերպման համար տրամադրվում են համապատասխան մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ, իսկ «Հանրակրթության

մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքում տրվում է ֆինանսավորման բարձրացված չափաքանակ:

24. Կազմակերպությունը պատասխանատու է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վկայագրման հիմքերն արձանագրելու, ինչպես նաև երեխայի կրթության կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների վերաբերյալ մասնագիտական եզրակացություն և առաջարկություններ ներկայացնելու համար:

25. Կազմակերպության կողմից իրականացված կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման և անհատական ուսուցման պլանի կազմմանն առնչվող վիճարկելի հարցերը քննարկվում և վերանայվում են հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից:

26. Կազմակերպությունը իր տարեկան ծրագրերում սահմանում է իր սպասարկման տարածքի կազմակերպություններում խորհրդատվություն իրականացնելու օրացուցային պլանը՝ դրանց անցկացման ժամկետների մասին առնվազն մեկ ամիս առաջ տեղեկացնելով համապատասխան սպասարկման տարածքի կազմակերպության ղեկավարին:

27. Կազմակերպությունում ստեղծվում է մասնագիտացված մեթոդական գրականության գրադարանային ֆոնդ՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

28. Կազմակերպությունն իրականացնում է տեղեկատվական-վերլուծական աշխատանքները, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վերաբերյալ:

IV. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

29. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորված պետական մարմինը (այսուհետ՝ լիազորված մարմին), գործադիր մարմնի ղեկավարը՝ տնօրենը:

30. Տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթն անցկացվում է բաց եղանակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշմամբ սահմանված կարգով:

31. Տնօրենի պաշտոնին կարող է հավակնել այն անձը, ով ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական, գիտամանկավարժական աշխատանքի կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն յոթ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

32. Կազմակերպության հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

33. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) կազմակերպության հիմնադրումը.

2) կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3) կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմի հաստատումը.

4) կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրա մեջ փոփոխությունների կատարումը .

5) կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.

6) կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը.

7) կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

8) օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

34. Լիազորված մարմինն իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն կրում դրա չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

35. Լիազորված մարմինը՝

1) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության գործունեության նկատմամբ,

2) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության տնօրենի՝ ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները, ցուցումները.

3) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննարկում է դրանց գործունեության ստուգումների արդյունքները,

4) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

5) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,

6) հաստատում է պետական կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

7) օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր է կնքում տնօրենի հետ.

8) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

36. Կազմակերպության տնօրենը՝

1) պատասխանատու է օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմինների որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.

2) կազմում և հաստատում է Կազմակերպության ֆինանսատնտեսական հաշվետվությունը, հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և ներկայացնում լիազորված մարմին,

3) օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատողներին, կատարում է աշխատանքի բաշխում, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և կարգապահական տույժեր,

5) ձևավորում է Կազմակերպության մասնագիտական հանձնաժողովները և հաստատում դրանց կազմերը,

6) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

7) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

8) սահմանում է Կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը,

9) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պահպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը,

10) բանկերում բացում է հաշվարկայի հաշիվներ,

11) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ.

12) իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող և Կազմակերպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

V. ԿԵՆՏՐՈՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

37. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

38. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին , հիմնադրի որոշումներին և /կամ/ իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

39. Սեփականության իրավունքով Կազմակերպությանը պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ՝ բացառությամբ Կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

40. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

41. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:

42. Կազմակերպութունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

43. Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը սահմանված կարգով հանձնելու վարձակալության, եթե այլ բան նախատեսված չէ հիմնադրի որոշմամբ:

44. Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավել չի կարող սահմանվել ՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

45. Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

46. Կազմակերպությանը ֆինանսավորում է հիմնադիրը: Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են բյուջետային և ՀՀ օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

47. Կազմակերպության գործունեության համար անհրաժեշտ ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով՝ «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» ծրագրի միջոցների հաշվին:

48. Կազմակերպության աշխատողների աշխատանքի վարձատրությունն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

49. Կազմակերպությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

50. Կազմակերպության լուծարման դեպքում գույքի օգտագործման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: